

ԱՇՈՏ ԱՎԵՏԻՍՅԱՆ

ԱՄԱՌՎԱ ՎԵՐՋ, ՀՆՁԱԾ ՄԱՐԳԱԳԵՏԻՆ

Հեռախոսավարուհի Արփիկի ամառն սկսվում էր այն օրվանից, երբ գյուղում հայտնվում էին առաջին հովեկները:

Սովորաբար ամենից առաջ գալիս էին փոստատան վարիչի՝ Առուստամյանի բարեկամները. Առուստամյանի եղբոր կինը՝ իր չորս-հինգ սպիտակամաշկ ու թմբլիկ աղջիկներով: Հետո գալիս էր դեռ քառասունական թվականներին երևանում հաստատված Էդիսի առաջին կոմբոջի քարտուղար Աղաթոնը՝ իր հայաստանցի կնոջ հետ: Այնուհետև գալիս էին մյուսները՝ հները, նորերը, գալիս էին պես-պես ճամպուրկներով, իրենց խայտաբղետ շորերով հայտնվում էին մարգագետիններում, աղբյուրների մոտ, գյուղի փողոցները լցվում էին տարակերպ խոսվածքներով, և հեռախոսավարուհի Արփիկի համար սկսվում էր մի հրաշալի ժամանակ:

Առաջ էր բերում նա իր լավագույն զգեստները, լվանում, արդուկում, խանութից գնում էր ամենաթանկ օժանելիքները, կանացի արդուզարդի մյուս բաները և սկսում ապրել բոլորովին նոր կյանքով, որի հաճույքն ու բերկրանքը միայն ինքն էր զգում:

Փոխվում էր վարվելակերպը, գյուղի պաշտոնյաների և ուսուցիչների հետ սկսում էր խոսել «դուք»-ով, շարժուձևերում, պահվածքի մեջ քաղաքում ապրող աղջիկներին հատուկ ինչ-որ գծեր էին հայտնվում:

Արփիկը կարգի էր բերում իր աշխատասենյակը, այսինքն՝ փոստային բաժանմունքի ոչ մեծ սրահը: Առաքող Լիպարիտին, փոստատարին և առհասարակ բաժանմունքի բոլոր տղամարդ հաճախորդներին արգելում էր ծխել սրահում: Ամեն առավոտ մարգագետնից կարճ ցողուններով, վառվռուն դաշտային ծաղիկներ էր հավաքում և դնում իր աշխատասեղանին: Իսկ հավաքարար Մարիցան օրական երկու անգամ մաքրում էր սրահը, սրբում ապակիներն ու պահարանների փոշին:

Մեծ քաղաքներից, հեռու-հեռու տեղերից լավ կյանք ու ապրուստ տեսած մարդիկ են գալիս, նրանց կարգին, Առուստամյանի ասածի պես՝ կուլտուրական սպասարկում է պետք, կիրթ ու վայելուչ վերաբերմունք է պետք: Թող զարմանան, թե այս լեռնային գյուղում ինչ օրինակելի կետ կա, ինչպիսի սիրալիր ու քաղաքավարի հեռախոսավարուհի:

Մեկ ուրիշ բան էլ կար. սկսվող ամառվա հետ սպասման մի հաճելի զգացում էր համակում Արփիկին: Ինչի՞ էր սպասում, ու՞մ էր սպասում՝ ինքն էլ որոշակիորեն

չգիտեր: Բայց ամեն անգամ առավոտ շուտ գործի էր գնում նույն զգացումը հոգում, նույն զվարթ տրամադրությամբ՝ մի ձեռքում թավշե գեղեցիկ պայուսակը, մյուսում՝ թափանցիկ տոպրակի մեջ դրած ուտելիքը: Տունը հեռու չէր կապի կետից, կարելի էր ընդմիջմանը տուն գնալ ու գալ, բայց Արփիկը տուն չէր գնում և մեծ փոստատների աշխատողների նման նախաճաշում էր հենց գործի տեղում:

Նրա հաճախորդների մեծ մասը հովեկներն էին: Ջարմանալի մարդիկ են դրանք: Ընդամենը մի օր առաջ են եկել իրենց հեռու քաղաքներից և վազում են փոստ՝ զանգելու, թե տնեցիները ոնց են, ինչ նորություն կա: Ասածների մեջ էլ մի կարևոր բան չկա. ժամացույցս փչացել է, կոշիկներս սեղմում են, ջուրը շատ սառն է... Եկել եք լավ-լավ տեղերից, հլա մի կարգին բանի մասին խոսեք, մի հետաքրքիր բան պատմեք: Այ, օրինակ, Երևանում տեսած կլիներ հայտնի երգիչներին, դերասաններին, բանաստեղծներին, պատմեցեք նրանց մասին, թե չէ գալիս են սուտ ու փուչ բաների մասին խոսում, քաղաքաբնակի իրենց անբռնազբոս պահվածքով մի քիչ զարմացնում Արփիկին և շինծու գործնականությամբ հեռանում: Մարդ չի էլ հասկանում, թե հովեկը ինչու պետք է գործնական լինի:

Անցյալ տարի թոշակի անցած մի ջրային ինժեներ էր եկել: Ծիշտ է, բնիկ այդ կողմերից չէր, բայց հասարակ ու մարդամոտ էր: Գալիս, նստում էր փոստատանը, հազար ու մի տեսակ հետաքրքիր պատմություններ էր անում, խոսում իր կարդացած գրքերից: Արփիկին հարցեր տալիս, թե այսինչ ֆիլմը դուրդ գալի՞ս է, այսինչ գիրքը կարդացե՞լ ես: Եվ միշտ գովում էր Արփիկին:

Առհասարակ Արփիկը շուտ էր ճանաչում մարդկանց. բավական էր, որ մի անգամ լսեր մեկի հեռախոսային զրույցը, և արդեն շատ բան պարզ էր դառնում:

Այս տարվա հովեկների մեջ մի զույգ էր գրավել նրա ուշադրությունը: Ջահել ամուսիններ էին: Կինը գյուղի դպրոցի օտար լեզվի ուսուցչուհու քույն էր, Երևանից էին եկել: Ջարմանալին այն էր, որ նրանք առանձին-առանձին էին գալիս զանգելու: Գեղեցիկ և ազդու դիմագծերով կինը միշտ խոսում էր մոր հետ, իսկ ամուսինը՝ ընկերո՞ջ հետ էր խոսում, թե՞ եղբոր հետ՝ Արփիկը չէր կարողանում ջոկել: Երբ նրանք խոսում էին, Արփիկը չգիտես ինչու, չէր ուզում լսել նրանց խոսակցությունը, ներքուստ ինչ-որ տհաճ բան էր կանխազգում: Իսկ երբ գնում էին, իրենից անկախ սկսում էր մտածել նրանց մասին: Մտածում էր, մտածում և հանկարծ սթափվում էր՝ ինքն իրենից մի տեսակ ամաչելով:

Հիմա էլ, գործի թեժ պահին, երբ շրջկենտրոնից հաշվետվություն են ուզում, նորից սկսեց նրանց մասին մտածել ու խառնել հաշիվները: Ինչու՞ է գեղեցիկ դիմագծերով այդ ջահել կինը այդպես զսպված չարությամբ խոսում, ինչու՞

ամուսինը մի տեսակ հոգնած ու ընկճված տեսք ունի և ինչու էր նա նախորդ օրը այդքան տխուր:

Նախորդ օրը նա եկավ նորից զանգելու: Մինչև կմիացնեին պատվերը՝ լուռ էր: Խոսելուց հետո ընկալուչը դրեց տեղը և չհեռացավ Արփիկի աշխատասեղանի մոտից, երկար նայեց սպիտակ ծաղկամանի մեջ դրված դաշտային ծաղիկներին ու հարցրեց.

– Դու՞ք եք հավաքել:

– Հա, – ասաց Արփիկը:

– Գեղեցիկ են, – հոգոց հանելով ասաց նա և ուզեց էլի ինչ-որ բան ասել, բայց փոխարենը հանեց ծխախոտը և սկսեց ծխել:

Արփիկը ուզում էր զգուշացնել, թե ծխել չի կարելի, բայց չգիտես ինչու, չարեց այդ ու ինքն էլ սկսեց նայել ծաղիկներին: Իսկ երբ գնաց այդ տղան, Արփիկը ինչքան էլ իրեն զսպեց, բայց չկարողացավ չնայել նրա հետևից: Գլուխը կախ, տխուր ու ընկճված գնում էր նա:

– Էդ ինչի՞ մասին ես մտածում, Արփիկ, – սրահի իր անկյունից հարցրեց հավաքարարուհի Մարիցան:

– Հեչ, հաշիվներս խառնել են, փորձում են ճշտել, – Արփիկը սթափվեց ու ձեռքը մեկնեց հաշիվներին:

– Թե՞ սիրահարվել ես, տե՛ս, հա... մորդ էլ են ասել, հենց գրիգորս բանակից եկավ, ձեզ պսակում ենք:

Կատա՞կ էր դա, թե՞ լուրջ բան, Արփիկը չգիտեր, կարևորություն էլ չէր տալիս, ամուսնանալու մասին չէր մտածում: Գիշտ է, մայրը անցած ձմեռ մի երկու անգամ ակնարկեց, թե ժամանակն է ամուսնանալու, ուզողներ էլ կան, բայց բանը դրանից այն կողմ չանցավ: Ժամանակը կգա, և կամուսնանա:

– Էն մարդը չեկավ էսօր, – պատուհանից դուրս նայելով՝ ասաց Մարիցան:

– Գա է՛լ նամակ չունի, – ասաց Արփիկը:

«Էն մարդը» Արփիկենց հարևանի տանը հանգստացողն էր, նիհար, անհանգիստ ու բռնկվող Կարապետյանը: Ամեն օր գալիս էր ու հարցնում, թե ինքը ցպահանջ նամակ չունի՞: Եվ ամեն անգամ հիշեցնում էր ազգանունն ու անուն-հայրանվան սկզբնատառերը՝ Կարապետյան Ս. Ս.: Չհիշեցներ էլ, Արփիկը գիտեր արդեն, բացի այդ, ցպահանջ նամակներ շատ հազվադեպ էին լինում:

– Անձրև է գալու, – ասաց Մարիցան, – գնամ լվածքս հավաքեմ: Լիպարիտը որ գա, ասա, թող...

Մարիցան արդեն միջանցքից էր խոսում, և Արփիկը մինչև վերջ չլսեց, թե լնչ է հարկավոր ասել Լիպարիտին: Նա նորից խորասուզվեց իր հաշիվների մեջ և

չնկատեց, թե երբ սկսվեց անձրևը և երբ՝ խոնավ սառնության հետ միասին սրահում տարածվեց օձանելիքի անսովոր ու հաճելի բույրը: Օտար լեզվի ուսուցչուհին էր եկել քրոջ հետ: Անձրևանոցներով, երկուսն էլ գեղեցիկ, երկուսն էլ նախանձելիորեն կանացի ու անմատչելի:

– Խոսել ենք ուզում, Արփիկ ջան, – ասաց ուսուցչուհին:

Արփիկը վերցրեց ընկալուչը, պատվերը հաղորդելու համար:

– Քանի՞ րոպե, տիկին Անժելա:

– Տասը:

Արփիկը հաղորդեց պատվերը և հաճախորդներին առաջարկեց նստել: Տիկին Անժելան և քույրը նստեցին սրահի կենտրոնում դրված գրասեղանի մոտ և սկսեցին ցածրաձայն խոսել: Այսինքն, խոսում էր միայն տիկին Անժելայի քույրը:

Եթե ուրիշ մարդիկ լինեին, Արփիկը հանգիստ կարող էր աշխատել նրանց ներկայությամբ, բայց սրանց ներկայությունը ոնց որ ճնշում էր, չէր թողնում կենտրոնանալ: Հակառակի պես ուրիշ մարդ էլ չէր գալիս: Լավ է, պատվերը սպասվածից շուտ միացրեցին:

Ընկալուչը սկզբում վերցրեց տիկին Անժելան:

Մա՛մ, դու՞ ես... Հա՛, ես եմ, հա... Ոչինչ, լավ ենք... հա՛, հա՛... Հիմա Գոհարին կտամ... Հա՛, ես ասացի, հիմա տեսնենք, ոնց որ լավ է... Հա՛... Ասում եմ՝ մնացեք, չեն ուզում... Հա՛, տեսնենք... Հիմա տալիս եմ... Վերցրու՛, – ասաց նա քրոջը:

Ապակիների չունեցող հեռախոսախցիկից պարզ լսվում էր ամեն ինչ, և Արփիկը այս անգամ ինքն իրեն տանջելով, նստած տեղում հանգիստ մնալ չկարողանալով, լսեց նաև Գոհարին: Գոհարը մոր հետ, ըստ երևույթին խոսում էր ամուսնու մասին: Ասաց, էլի օյիններ է թափում, նախորդ օրն էլ խմել էր, մեկ-մեկ Երևան է զանգում, երևի ինչ-որ մեկն ունի: Երևանյան իր բնակարանում նստած մայրը հավանաբար խորհուրդ տվեց ավելի համբերող, ավելի զիջող լինել:

– Ախր, չգիտեմ ի՞նչ է ուզում, – չարացած ասաց Գոհարը, – համ էլ հո ոտքերը չե՞մ ընկնելու... Օ՛ֆ, զահլա չունեմ... Հեշտ է ասելը... Չգիտեմ... Երևի մի շաբաթից, Տասնհինգի-տասնվեցի կողմերը... Հա՛... Չգիտեմ... – Գոհարի ձայնը նորից չարացավ: – Բոլորդ ինձ եք խորհուրդ տալիս, ինձ եք մեղադրում... Հիմա կտամ, հիմա...

Ընկալուչը նորից վերցրեց Անժելան, իսկ Գոհարը դուրս եկավ խցիկից ու նստեց գրասեղանի մոտ, գեղեցիկ, նուրբ ձեռքը ծնոտին հեճած:

Օգոստոս ամսվա անձրևը շատ եկար չէր տևել, այլապես սրահի դռան վերևից անձրևաջուրը կսկսեր կաթկթել:

– Մենք վերջացրեցինք, ինչքան ենք տալու, – տիկին Անժելան բացեց փողի քսակը և վճարեց Արփիկին:

Ախր, ամեն ինչ սազում է նրանց. և՛ փող հաշվելը, և՛ վերադարձրած մանրը վերցնելը, և՛ քսակը բացելն ու փակելը: Ի՞նչն է տանջում այս մարդկանց: Ինչու՞ է այդ Գոհարը այդպես անհասկանալի ու վրդովված: Ինչու՞ է ինքը ուզում, որ մեղավորն ու սխալվածը Գոհարը լինի և ոչ թե հոգնած տեսքով, խոնավ ու թախծոտ աչքերով ամուսինը:

Թող ապրեն իրենց համար, իր ինչ գործն է, ինչու՞ է այդքան մտածում նրանց մասին, ինչու՞ է սիրտը ճնվում, երբ հիշում է այդ տղային...

Նման անհանգիստ ապրումներ Արփիկը երբեք չէր ունեցել: Ինչի՞ց սկսվեցին դրանք, ո՞նց սկսվեցին՝ ինքն էլ չհասկացավ:

Եվ երկու օր հետո, երբ նորից այդ տղան եկավ զանգելու, հոգու խռովքը թաքցնելու համար Արփիկը պատվերը միացնելուց հետո թողեց ու դուրս եկավ սրահից: Դուրս եկավ, կանգնեց փոստատան մուտքի աստիճաններից ու սպասեց՝ մինչև տղան խոսակցությունն ավարտի:

Իսկ նա խոսելուց հետո մոտեցավ Արփիկի սեղանին, վճարեց ու էլի չհեռացավ: Կանգնած նայում էր ծաղիկներին, որոնք թույլ բուրելով իրենց խղճուկ, բայց փոքրիկ գեղեցկությամբ ձգտում էին անել մի դժվարին բան. փոքր-ինչ շուք տալ սրահի յուղաներկ պատերի, գրասեղանների, երկաթյա պահարանների ու վատ ներկած փայտե հատակի գորշությանը:

Մի երկու րոպեի չափ կանգնելուց հետո նա մոլորված ու երկչոտ ժպիտով նայեց Արփիկին: Գրադարանավարուհի Յամեստն էլ էր ասում, որ զալիս է այդ տղան, այդպես երկչոտ ժպտալով գիրք է վերցնում ու մոլոր քայլերով գնում: Յիմա էլ նույնը: Չլինի՞ հանկարծ մի թարս բան հարցնի:

Արփիկը զգում էր, թե հուզմունքից ինչպես է բաբախում սիրտը, ինչպես է վառվում դեմքը, և թվում էր, թե դիմացինը լսում է իր սրտի զարկերը:

– Մինչև քանի՞սն եք աշխատում, կարո՞ղ եմ մի անգամ էլ զանգել:

– Մինչև յոթը կարող եք, – ուշացումով պատասխանեց Արփիկը:

– Յետո հնարավոր չէ՞:

– Չէ:

– Կարևոր բան կար..., – տղան մի պահ լռեց:

– Գնացեք շրջկենտրոն, էնտեղից կարելի է զանգել, – ասաց Արփիկը՝ տեղից վեր կենալով:

– Էդ դեպքում վաղը կգամ: Ցտեսություն՝:

– Ցտեսություն, – ասաց Արփիկը և մոռացավ, թե ինչի համար էր տեղից վեր կացել: Մոռացավ կամ էլ չուզեց հասկանալ, որ վեր էր կացել հենց այնպես, պարզապես չէր կարող նստած հանգիստ խոսել նրա հետ:

Այդ, ինչպես նաև մնացած բոլոր բաները, Արփիկը հասկացավ հետո, երբ անցել էր ամեն ինչ:

Իսկ մինչ յայդ հույզերի, ապրումների, խոհերի ու մտքերի իրարամերժ հորձանուտից նա փորձում էր ինչ-որ բան հասկանալ, տարբերակել, փորձում էր չզգալ, չապրել, չհուզվել, բայց չէր ստացվում: Նա շատ պարզորոշ կերպով տեսնում էր, որ այդ ամենը իր ուժերից վեր է, և այդ մտքից նա սարսափում էր: Չապրած ու չհասկացված ամոթի մի զգացում տանջում էր իրեն: Ջղջումը դեռ հեռու էր, առայժմ գերիշխողը նույն ցավեցնող ու անուշ զգացումն էր, և դեպի այդ թախժոտ, գունատ ու խզված ձայնով տղան, երկչոտորեն ձգվող հոգու մորմոքուն տենչը:

Չետզհետե կարճացող օրերը թռչում էին իրար հետևից, իսկ Արփիկը չէր նկատում: Միայն զգում էր, որ շատ բաներ, որոնց առաջ մեծ կարևորություն էր տալիս, հիմա անհիմաստ ու ծիծաղելի են դարձել: Տանջվում էր ներքուստ, բայց ապրելը, աշխատելը ավելի հեշտ էր դարձել: Իսկ ամենահրաշալիս գիշերներն էին, պատրանքներով, անուրջներով ու աղջկական արցունքներով ողողված գիշերները...

Այդպես լա՞վ էր, թե՞ վատ՝ առայժմ դժվար էր որոշել, Արփիկը այդ մասին չէր էլ մտածում: Նա, հուզվելով և համբերությունից ելնելով սպասում էր այն ժամին, երբ այդ տղան գալիս էր զանգելու: Գալիս էր, զանգում, ծխախոտի հոտ թողնելով մի քիչ կանգնում Արփիկի գրասեղանի մոտ ու հեռանում: Այդքանը: Սակայն այդ փութանցիկ տեսակցությունը բավական էր, որպեսզի մի չորս-հինգ օր ևս Արփիկի հոգում նոր ուժով բորբոքվեր հուսադրող ու հուսախաբ անող, ոգևորող ու անզորացնող այդ զգացումը:

Լինում էին պահեր, երբ նա մտածում էր, որ անհիմաստ է իր արածը, որ այդ ամենը երեխայություն է: Սակայն նման պահերը կարճ էին տևում, նույնիսկ արդեն սկսել էր մտածել, թե իբր այդ տղան հենց այնպես չի կանգնում իր մոտ, հոգում ինչ-որ բան ունի երևի:

Մի անգամ նորից տիկին Անժելան ու քույրը եկան զանգելու: Նրանց խոսակցությունից Արփիկը կռահեց, որ հաջորդ օրը քույրն ու ամուսինը վերադառնում են Երևան: Այն, որ նրանք գնալու էին, Արփիկը գիտեր, բայց երբեք չէր մտածել դրա մասին: Եվ հիմա, լսելով այդ, մի տեսակ կարկամեց, կոկորդը

չորացավ ու շվարեց մնաց: Չզգաց նույնիսկ, թե երբ գնացին տիկին Անժելան ու իր քույրը, երբ ներս եկավ Առուստամյանը, ինչ կարգադրություններ արեց:

Մի կերպ անցկացրեց օրը և աշխատանքն ավարտելուն պես չգնաց մարգագետին՝ ծաղիկներ հավաքելու, այլ, ճամփան մի քիչ երկարացնելով, տուն գնաց՝ անցնելով դպրոցի կողքին գտնվող ուսուցչի տան առջևով: Երկհարկանի ու մեծ պատշգամբներով ուսուցչի տան դեմը երկու-երեք երեխաներ էին լվացքի պարանի հետ խաղում: Ո՛չ տիկին Անժելան, ո՛չ նրա քույրը, ո՛չ էլ քրոջ ամուսինը չէին երևում:

Տուն հասավ ու քաշվեց իր սենյակը:

Մայրն ու եղբոր կինը անհանգստացած հարցուփորձ արեցին, բայց որոշակի պատասխան չստանալով, մնացին տարակուսած:

Թող անցնի այդ գիշերն ու այլևս ետ չգա, ծանր, անամոք ու տանջող այդ գիշերը...

Առավոտյան, երբ նա սթափվեց մղձավանջային նիրհից, բարձր թաց էր, իսկ աչքերի տակը կապտել էր: Արթնացավ մի մեծ ու լավ բանի կորստի ցավ հոգում, թուլացած մարմնով ու պղտորված մտքով: Մի կերպ կարգի բերեց իրեն ու գնաց աշխատանքի:

Չտեսավ Արփիկը, թե ինչպես այդ ջահել ամուսինները հեռացան գյուղից, չտեսավ, թե ինչպես ամուսինը քնքշորեն օգնեց կնոջը՝ բարձրանալու ավտոբուս, ինչպես տեղավորվեցին և շողացող ժպիտը դեմքերին՝ հրաժեշտ տվեցին տիկին Անժելային, որը խոնավ աչքերով հետևեց ավտոբուսին մինչև ճանապարհի ոլորանը...

Հոգու ցավը երևի ավելի սաստիկ կլիներ, եթե Արփիկը չունենար հույսի մի փոքրիկ կտոր: Նրան թվում էր, որ այդ տղան Երևանից անպայման կզանգի իրեն: Եվ սպասում էր...

Առաջին շաբաթը նա կարծես շանթահար էր լինում, երբ լսում էր միջքաղաքային հեռախոսազանգերի ձայնը: Սակայն օրերն անցնում էին, իսկ Արփիկին զանգող չկար ու չկար: Օրեցօր փոխանցվող հույսի ալիքը թուլացավ, նվազեց և այն մյուսի հետ ցավող սպիի նման մնաց հոգում: Եղած-չեղածից այդքանը մնաց:

Եվ մի անգամ, երբ գյուղից հեռացել էր վերջին հովեկը, երբ իրիկունները սկսել էր աշնան չոր քամի փչել, Արփիկը մոր հետ մարգագետնում բուրդ լվանալու գնաց: Բարակած առվի ջրի մեջ նա լվանում էր բուրդը և մտովին վերհիշում եղած-չեղածը: Սկզբում կարծես ոչինչ չկար, հանգիստ, առանց հուզվելու մտածում էր անցածի մասին:

Սակայն հետո եղավ մի պահ, երբ այլևս չկարողացավ դիմանալ, և որպեսզի մայրը չտեսնի, մի քիչ հեռացավ, նստեց առվի ափին ու հեկեկաց՝ գլուխն առած ավերի մեջ:

Ամռան վերջն էր, դիմացը՝ հնձած մարգագետինը: Լացել կարելի էր: